

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԱՆՈՒԹՅՈՒՆ, Ապախի փողոց
ՄՈՒԳԱԹՅՈՒՆ ԴՈՂՁ ՊԻՆԿ
Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒԾՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄ
ՄԷԿ անգամի համար տողը 3 ԴՐՁ. ողջ
ՄԷԿ անգամի առաջին ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ	
ՆԱԽԴՐԱԾ ԶԱՄԱՐ	
Տարեկան	100
Վեցամսեայ	55
Եռամսեայ	30
ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ	
Տարեկան	26
Վեցամսեայ	14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒՄ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՁՈՒՄ
ՈՒՆԵ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՓԱՐՈՍ

Լ. ՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՅՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԿԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԾ ՕՐԵՐԸ
ՏՈՐԵՆԸ-ԽՈՐԱԳԻՐ Յ. ԱՆՓԻՐ

Փ Ր Օ Ն Ի Կ

ԱՐԲԱՑԱԿԱՆ ԱՊՏԱԿՆԵՐ

Անշուշտ կարգացիք հավաստի երեկուան հեռագիրը:

ԱՄՍՏԵՐՏԱՄ, 28 ՆՈՅԵՄ. — Հոլանդացի թագուհի Սառա Մաքսիմիլիանան Երկրորդ կերպով ծննդն ունի Վերադարձի:

Այս լակոնական հեռագիրը մէկ կողմէն կը հաստատէ թէ կատարեալ երջանկութիւն չկայ այս աշխարհին վրայ և միւսէն սիրտ կուտայ այն ամեն կիներու որոնք քիչ մը... բուն գոգուանքներու ենթակայ են, համա կերպութեամբ տանելու այն հարուածները զորս քարծիրտ ամուսիններ կը շնորհեն իրենց սովորութեան մը և կամ սկզբունքի մը հետեանքը:

Եթէ անպատեհութիւն մը կայ որ այդ հեռագրէն պիտի ծնի այն ալ սա է թէ՛ հալած... հալածի պիտի բերէ այն ամուսինները որոնք տակաւին կը վարանէին ձեռք վերցնելու իրենց կիներուն վրայ որ թէ և թա. գուհի չեն, բայց կրնան Սրբուհի կամ Մարգարէի ըլլալ:

Կնածոնութիւնը՝ տարուան նորա-ծնութիւնը պիտի ըլլայ, պիտի տեսնէք, քանի որ օրինակը թէ և Սո-րիմ-Նահանգներէ կուգայ, բայց վե-րէն կը փրթի:

Թագուհի մը ծնծ ուտելէն ետքը, կարծեմ ամեն կին կրնայ պատրաստուիլ... քիչ մը սեղոյ գոգուանքներու:

Սակայն կատակը մէկ կողմ, Մէք-լէմպուրկի դուքսը պարզապէս բեռնակրի մը պէս շարժած է եթէ իրաւաւորը à plate couture, ատանկ վտանգաւոր կերպով ծնած է կինը որ թագուհի է, և ատկէ ալ աւելի, աղւոր է և մանկամարդ:

Կը հասկնամ որ մարդ ծնծէ թա. գուհի մը որ աղւոր եղած է... Սե-վաստոփոլի պատերազմէն առաջ, բայց ձեռք վերցնել քսան տարու, գեղանի, թարմ կնկան մը, օհ, առ ո՛չ:

Քաղաքակիրթ աշխարհը պիտի այ-պանէ Հոլանտայի թագուհիներ իշխա-նը իր այդ գեղեցիկ և կոպիտ արար-քին համար, վասնզի աւելի կայան է ամբողջ ժողովուրդը մը թագուհիի մը դէմ ոտքի հանել քան թէ ձեռք վեր-

ցընել ատանկ արքայական այտերու վրայ:

Եւ յետոյ, ճենթընէն մարդ մը իր բարկութիւնը տնցնելու համար զա-ւակ անցնել չի տար կնկանը, voyons!

Խեղճ վիճակի մը:

Ինչ կ'արժէ ուրեմն քսան տարու և թագուհի ըլլալ, ժողովուրդի մը վրայ տիրել, արքայական ապարջ կրել ճիշդակ աղւոր ճակտի մը վրայ, սիրել և սիրուիլ, պաշտուիլ ամեն կողմէ, սրտիդ ուզածը առնել, մայր ըլլալու վրայ ըլլալ, եթէ քու կեանքի ընկերդ, բեռնակրի մը կոշտու-տութեամբ, ծիծ տալէդ առաջ ծնծ կուտայ քեզի:

Քամուհի կամ Սիտնաուի խա-նութիւն 5 ոսկինոց employéներ կան որոնց կիները քեզմէ երջանիկ են, որովհետեւ ասոնք Երկինքի կը ծնծեն, զարմանալի չէ:

Հպատակեցնել ամբողջ ազգ մը և չի կրնալ իշխել ամուսնոյ մը վրայ դժբաղդութիւն մըն է հարկաւ որուն դառնութիւնը ճաշակել մինակ թա. գուհիներու տրուած է:

Ինչ կիներ կան արդեօք որ գոնէ վեց ամիս թագուհի ըլլալ պիտի ու-ղէին օրը երկու տոգիմա ապտակ ուտելու պայմանաւ, մինչդեռ գուր, գրաւ կը դնեն, այս պահուս՝ պարզ ձկնորսի մը կինը ըլլալ պիտի ուղէ-իք ապտակ մը կերած ըլլալնուդ համար...:

Կեանքի հեղուկութիւնն է այս որուն մարդուս խելքը չի հասնիր:

Թագուհի ըլլալն ալ իր անպատե-հութիւնները ունի, գիտեմ. ընտանե-կան ներքին կեանքի անուշութիւնը ձեզի համար չէ. շատ կին ծնծ կե-րած է, բայց գաղտնիքը դուրս կ'ըն-չէ և ամէն ապտակներու ամսիջա-պէս համբոյրներ յաշորգած են կար-միր, տաք այտերու վրայ:

Առաջին անգամ որ ձեր բարձրա-պատիւ ամուսինը կը համարձակի ա-տանկ անպատեհաւ կատակ մը ընել ձեզի, հալած մէջտեղ կը նետուի և մինչև հոս արձագանքը կը բերէ ըն-տանեկան այդ միջադէպին:

Ինչ որ ալ ըլլայ պատճառը կամ արդեւեքը այդ եղանկան ապտակին որ յոգնակի ալ է թերեւ, աշխարհի մէջ չ'պիտի գտնուի մէկը, որ ներէ

Մէքլէմպուրկի դուքսին արարքը որ այլանդակ է և այլանկի:

Եթէ զոյգ մը աղւոր աչեր, քսան տարիներու ամբողջ հմայքը, թա. գուհիի մը վեհափառութիւնը, յղի կնկան մը սրբութիւնը չի կրցան զսպել տալ իրեն աններելի բարկու-թիւն մը, եթէ չի խնայից իր պատ-ւոյն և մոռցաւ օրէնքները ու պատ-շաճութիւնները, սակայն միտքը բե-րելու էր որ դիմացինը ազգ մը, Հո-լանտան կը ներկայացնէր, և պէտք չէր որ այդ ապտակը տար գոնէ... ստորին նահանգներու սիրոյն հա-մար:

Յ. Ա.

ՀԵՆՐԻԲ ԻՊՍԵՆ

(ԹԱՏԵՐԱԳԻՐ-ԽՄԱՏԱՍԵՐ)

(Շար. մախորդ թիւէմ)

L. Passarge-ի 1884-ի և Henrik Jaeger-ի 1890-ին իպսէնի մասին հրա-տարակած գործերը կարգաւոր կարելի է իպսէնի ասբող կեանքը աչքի առնել ունե-նալ, իր բոլոր մանրամասնութիւններով: Բայց ինչ որ ամենէն աւելի կը տեսնենք սոյն կենսագրական հեղինակութիւններուն մէջ, սա է թէ ինչպէս իպսէն իր այսօր-ուան անհատականութեան յանգած է: Հէն-րիբ իպսէն ծնած է Նորվիգիական պատիկ քաղաքի մը մէջ, բարեկեցիկ ընտանիքի մը, իր տղայութիւնը կ'անցնէ հանգաւոր և սո-վորական աւելի լուրջ, առաջ իրմէ պղ-տիկ եղբայրներու խղիւղութեան ալ մասնակ-ցելու: Բարձր աշտարակով եկեղեցին, ա-նոր աջ կողմը գգաստարանին շէնքը, ձա-խին վրայ քաղաքային տունը, բանտով և յիմարներու խուցերով: Ասիկա աշխարհա-յին առաջին տեսարանն է զոր մանուկ իպ-սէն իր ծնողական տունէն տեսած է, ա-ռաջին անգամ իր որդեգր ակնարկը դուրս սեռեցելուն: Իպսէն ութ տարեկան էր երբ հայրը կը կորնցնէ իր հարստութիւնը ո-րով և ընտանիքը կը հարկադրուի քաղաքի ազարակի մը փրկած պղտիկ շէնքին մէջ: Ասիկա առիթ մըն էր իպսէնի համար որ տեսնէր բարեկեցութեան և աղքատութեան հակադրութիւնը, զգալով միանգամայն ըն-կերական այն վարժանքը հանգեալ աղքատ-ներուն և հարուստներուն: Այս տղաւորու-թիւնները արտայայտած է իպսէն իր առա-ջին բանաստեղծութիւններուն մէջ: Այն ըն-տանեկան ձախորդութեան քիչ տարիներ

վերջն է որ իպսէն զեղազործի մը քով հինգ տարիի չափ պշկերտութեան շրջանին մէջ, կ'իյնայ 1848-1849-ի շրջանը, որուն յու-զուեանից պատահարներն իր ակօսներ կը ձգեն իպսէնի մաքին ինչպէս նաև հոգ-ւոյն ալ: Ալ անկից վերջը իպսէն միշտ անոնց կողմը եղած է, որոնք անժառանգ-ները եղած են: Խանդավառ բանաստեղծու-թիւններ կը գրէ Հունգարացիներուն ուղ-ղուած, ունի մը ունի Շլէսի Օսթր թա-գաւորին դրած, որուն մէջ կը յորդորէ զայն որ անապարէ Շլէզվիլի ցեղակիցներուն օգ-նութեան հասնիլ: Կեանքի կանխահաւ հա-սունութեամբ և ընկերական գործերու մէջ իր մասնակցութեամբ օր մըն ալ, իպսէն ինքզինքը ժողովուրդին հետ ճակատ առ ճակատ կուտի բռնուած կը զգայ: Իր առա-ջին թատերգութեան մէջ «Քաղցիւն» իր երիտաւորի աւելում կը ներկայացնէ 1848-49-ի շրջանի յուզումներն և հասա-րակութեան և անհատի միջև զոյութիւն ու-նեցող հակասութիւնները: Դեղազործի աշ-կերտութենէ վերջ իպսէն կուգէ համալսա-րանական կրթութեամբ դիք մը ձեռք ան-ցընել, բայց չի յաջողիր իր լրագրական և թատերգական գործունէութեան պատճա-ռով: Ասոր վրայ է որ նախ Պերկլին և յետոյ Քրիսթիանիայի թատերներուն մէջ պաշտօններ կը ստանայ իբրև թատերագիր: Քրիստիանիայի մէջ է ամենէն աւելի, ուր իպսէն կը ջանայ հաստատուիլ, բայց իր «Սիրոյ կատակերգութիւն» գործը բեմին վրայ ներկայացուելէ վերջ այնպիսի գայթակու-թիւն մը յառաջ կը բերէ ժողովուրդին մէջ, որ երբ ինքն ալ իր մրցակիցներուն ինչպէս Պերկլին և Քրիսթիանիայի թատերներուն մէջ կուգէր ստանալ, համալսարանի ուսուցիչնե-րէն մին կը պատասխանէ իրեն թէ սիրոյ կատակերգութիւնը պողոք ոչ թէ օգնութեան այլ փառաւոր ծնծի արժանի է:

Սիրոյ կատակերգութիւնը իպսէնի առա-ջին թատերգութիւնն էր, որուն մէջ հեղի-նակը առաջին անգամ ըլլալով կը ներկա-յացնէ իր ժամանակի կեանքը, ու ասով մանաւանդ ընկերութեան գէմ իր բուն պայ-քարը կը սկսէր: Վերջապէս եկաւ օր մըն ալ ուր իր վարած թատերն ալ չի կրցաւ մրցումի դիմանալ, և իր քանի մը բարե-կամներուն շնորհիւ յաջողեցաւ կառավարու-թենէն ամսական մը ստանալ ճամբորդելու համար: Իպսէն բուն Հիւսիսի զաւակ, նետ-ուցաւ թափառկող կեանքի մը մէջ. նախ քանզի հարաւ, Իտալիա: Մինչև վեր-ջին տոններն կը շարունակէր իր այս թա-

Խ. Տ Ե Մ Ի Ր Ճ Ե Ա Ն
Ա Յ Ա Մ Ն Ա Ք Ո Յ Ժ
ՔԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3 ՕՐԷԼ ՇԷՓԸՐՏՍԻ ԴԻՄԱՑ

Երեքտրական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ ակուայի հիւանդութեանց բուժում: Պատրաստութիւն բնականին յար և նման կեղծ ակուաներու, ցանթիքներու ոսկիէ, ալյումինիումէ, ֆաուլտէ: Ապահով և տոկուն քղօնկաւոր ոսկի, բլաթին, կայլն, կայլն: Լինտերու հիւանդութեանց զարմանում երեքտրական և ուրիշ միջոցներով:

փառքուտ կեանքը: Առանց հաստատ տեղ մը ունենալու կ'ապրէր փոխի ի փոխի Հոռ-մի, Տրեգտէնի, Միւնիքի մէջ, և թէև կա-րողութեան և ընտանիքի տէր մէկը, ցան-կութիւնը չէ զգացած իր համար տուն մը ունենալու: Հակառակ իր մեծ հայրենակ-ցին Պեթօրնսօնի որ հայրենիքէն բնաւ դուրս կ'ուրաւ չէ իր ստորը և բանաստեղծի մը անակաւ հոգիին կոտեւելու բովանդակ ե-ռանդով մասնակցած է իր երկրին հան-րային և մտաւորական գործունէութեան, իսպառն ապրած է, Հայնրիհ-Հայնէի պէս, կամաւոր աքսորի մը մէջ և ոչ քաղաքական, ոչ ալ գրական գործունէութեամբ մը կը կապուի իր երկրին կամ արտասահմանի մէջ եղած կուսակցութեան մը հետ: Իր ազգակիցներէն բոլորովին անշատ կերպով ապրած է և մինչև երկու տարի առաջ մի-այն կարճ ժամանակի մը համար, կ'այցե-լէր իր հայրենիքը: Պեթօրնսօն յառաջա-պահ է իր ազգակիցներուն և իր անոնց վրայ ունեցած ազդեցութիւնը շատ մեծ է, որով նման միայն վիթթօր իսկօ ունեցած է ժամանակին, ֆրանսացիներու վրայ: Բայց իսպառն հակասութեան մէջ եղած է իր ազ-գի նկարագրին հետ, ու ասիկա զիստօր պատճառ եղած է որ իր գրական արտա-դրութիւնները իր երկրին մէջ չ'ունենան այն մեծ յաջողութիւնը որուն արժանի են: Թէ ինչ աստիճան զարգացած է իսպառնի մէջ անհատական անկախ գոյութեան մը զգացումը, կարելի է տեսնել իր բարեկա-մին Տանթարթագի մեծանուն գրագատ կէտի Պրանտէի ուղղած նամակի մը հետեւեալ տողերէն, «Բարեկամները շատ յարգի զար-գեր (luxé) են. և եթէ մարդ իր դրամա-գրութիւն կենալի մէջ կոչուի մը, պարտաւո-րութեան մը գործադրելուն յատկացնէ, այլ ևս անկարող կըլլայ բարեկամներ ալ պա-հելու: Բարեկամներ պահելու մէջ ամենէն սուղ նստողը ոչ թէ անոնց համար մեր ըրածն է, այլ ինչ որ մենք անոնց սիրոյն կը հրաժարինք ընելէ»:

(Շարունակելի)

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ԱՄԵՐԻԿԱԾԻ ՄԻԼԻԱՐԱՅԷՐ ՄԸ

Կըսեն թէ թուանշանի մը պէս պերճա-խօս բան չիկայ:

Ռամկավարական Ամերիկան այնպիսի թուանշաններ կը հնչեցնէ մեր ականջին որոնք երազել կուտան խեղճ աղբատները

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ» Ի (30)

ԺԸՀԱՆ ՏԻՎՐԷ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՅՈՒԱԾ ՎԷՊ

ԳՈՒԻ Է.

Այս ոչ խրախուսիչ սկզբնաւորութեան հակառակ, Սալաւատին անվրդով մասը, ընդ-հակառակը, այդ ձայնին հնչիւնը լսելով, բովանդակ թաշտակով վերադարձեր էր ի-րեն. Իրաւը իր նպատակն էր, պահի կ'աւ-զէր, ու պիտի բռնապատէր որ ան ալ զին-քը ուզէր. — կ'ըստաւէր ուրեմն որ ինքն իր վրայ հարկադրած անտարբերութենէն ու ամպարհուստութենէն յոգնէր, քաջ գիտ-նալով որ անհանգրգանջութիւնը պիտի ընդհուպ

և կ'ապշեցնէր հարստութեան հաւատարմա-ժանման տեսականագէտները:

Ամեն մարդ իմացած է Ռօքֆէլլէրի ա-նունը որ երկաթուղիներու թագաւորներէն մին է: Պ. Ռօքֆէլլէր ամենէն հարուստ բաժնետէրերէն մին ալ է Սթանտարտ Օյլ Բա-րիւրի սէնսիթիւ: Այդ մեծահարուստ բն-կերութեան արմէթղթերուն հարկերն քա-ռասունը իր ձեռքն է:

Կուզէք գիտնալ թէ ամերիկացի միլիա-րատէր ինչ գումար ստացաւ իբր իրեն բա-ժին հարկերին 48 շահաբաժնին վրայ զոր յիշեալ սէնսիթիւն վճարած է ներկայ շրջա-նին համար: «Տասը ինը միլիոն երկու հարիւր հազար տոյար», այսինքն «չորս միլիոն եօթստական ոսկի»:

Պ. Ռօքֆէլլէր գեռ առեւտրական հրա-պարակէն քաշուած չէ:

ԺԱՆՏԱՏԵՆԻ ԾԻՃՈՒԿԸ

Պէտք է խոստովանել որ շինարարութիւ-նը ընդհանրական գեղն է և եթէ քիչ մը գեռ անոր կիրարկութիւններն ու դարձա-նումները շարունակուին, մարդ չի պիտի գիտնայ թէ ալ ինչպէս ընելու է հանդստ-րէն մեծանելու համար: Իրօք, կատաղու-թեան, ժանտախտի, կեղծմաշկի, և թոնի դէմ շինուելու ետքը, հիմա ալ մեղ կ'աւե-տեն հակաժանտախտիկային շինուելը: Տօքթ. Շանթմէն որ Կալիֆօռնիայի տարիէ ի վեր այս հիւանդութեան միջոցաւ ետէն ինկած էր՝ մահացուցած է երկիւղալի անասունը, և եթէ երեք ամեւ ի վեր կատարուած փր-ձանութիւնները ստող են, ասկէ ետքը այդ հիւանդութիւնն մեծնիլը անհարկութիւն է:

Տօքթ. Շանթմէն՝ դարձանի իր նոր եղա-նակը ի գործ դրաւ ժանտախտիկ բռնուած հարիւր հիւանդի վրայ: Ինքուրը չորսը անողջացան իսկ միւս վեցը անապա-հաւ: Բարեկամի մը պատճառով մեռած ըլլալ կը թուին: Ասանկով մահացութիւնը հարիւ-րին վեց է, միջոցաւ այն հիւանդանոցներուն մէջ ուր ի գործ կը դրուի դարձանի հիւ-նդանակը, մահացութիւնը հարիւրին 32ի անհաւանդիչ թիւն վար չիջնար:

Քանի մը ամիսէ ի վեր է միայն և քո-սան տարուան փնտռումը ետքը, որ Տօքթ. Շանթմէն յաջողեցաւ իր շինուելու տեսա-կան աշխարհէն գործնականին մէջ դնել: 1885էն ի վեր կըրցած էր կողմացնել վա-րակիչ միջոցը բայց չէր յաջողած պէտք եղած դարձանի գտնել: Իր ասալին կիրար-կութիւնները ուրիշ բան շեղան բայց եթէ պատուաւորութեան: Անաստ միջոցով մէկ

յաջողութեան, և անաշուան պէս իրեն ան-նատուր պիտի ըլլար, վրաս է և անգոր, երբ ալ ձանձրանար գերագոյն անտարբե-րութեան այդ դերէն զոր կը ջանար խա-ղալ իրեն հանդէպ:

Թալաւած չէր. քանի մը հասարակ հա-ցումներէ վերջը, արոնց պատասխանեց նոյն հանգարտութեամբ զոր իրաւի վրայ կը տեսնէր, աւ վերջինը յանկարծ պոռթկաց, անկարող իր վիշաք զսպելու:

Ամենէն առաջ դաճութեամբ հիգնեց ձեռքէ ինկած իր կարասիներուն աղբատու-թիւնը, այս փոխառիկ տանը մերկութիւնը, յետոյ անցաւ կենալը ներկայ կենալին հետ բաղդատելով, յիշեց այն երջանիկ օ-րերը, այն յաջողութեան օրերը, երբ, ամե-նագոր, թագաւորած էր բրէսիլի սրտին վրայ, մեծ հանքէն աւելի երկրիւր և հիւ-նդանութիւն ազդելու իր շարժը:

Կողմ ձգելով և անոր արտադրած թոյնը բնակելով է որ վերջապէս յաղորդեցաւ զա-նիկ դարձանի սոյն եղանակը որ այսօր հը-րաշքներ կը կատարէ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԴԵՂԵՑԻ ԼՈՒՐ ՄԸ

Ուրախութեամբ կը լսենք թէ Մանչեսթրի մեծահարուստ վաճառականներէն Տիար Մար-տիրոս Թօքսթեան իր հարստութենէն մաս մը, 20,000 անգ. սակի, յատկացուցեր է ազգագուս հիմնարկութիւններու: Եթէ մեր տեղեկութիւնները ստող են, այդ գումարը պիտի գործածուի կրթական հաստատու-թեան մը ուր պիտի ընդունուին 50ի չափ յաջողագոյն աշակերտներ թրքահայ զարդ-ներէ: Այս հայ կրթարարը պիտի հա-տատուի Անգլիոյ կամ Գերմանիոյ մէջ, ու-նենալով բարձրագոյն երկրորդական վար-ձարանի ծրագիր մը, զոր աւարտելէ ետքը աշակերտները կարող պիտի ըլլան հետեւելու համալսարանի դասընթացներուն, շարու-նակելով ապրիլ հայ կրթարարին մէջ՝ հոն դասախօսելով ստորին կարգերուն: Մաս-նաւոր խնամք պիտի արուի տոհմային գա-տարարութեան, տոհմային լեզուի, գրա-կանութեան ու պատմութեան ուսուցումին:

Ասանկ փառաւոր գաղափարի մը առջև, որուն իրականացումը կը խոստանայ մեզ Մանչեսթրի մեծահոգի վաճառականը, մեզի ուրիշ բան չը մնար աւելցնել թէ ոչ մաղ-թել որ իր կենդանութեան իսկ կարենայ տեսնել եր վեհանքն ու գեղեցիկ յղացու-մին իրագործուի: (Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի.)

ԿԱՐՆՈՅ ԵՐԿՐԱՇՈՒԹԸ

Նոյեմբ. 11ի առաւօտ ցաւալի տպաւորու-թեամբ մը համակուցեցաւ, Կարնայ մէջ պա-տահած երկրաշարժին առաջին հետազոտներն ստանալով: Տեսնուի ոստակի եղած է, մօտա-կայ աւաններուն ու զիւրազարդներուն մէջ ալ բաւական փնտ պատճառելով: Բայց ա-մենէն աւելի քաղաքը փնտ կրած է ուր մարգաւ կորստաներ ալ կան դժբաղդարար: Հայ ազգաբնակչութեան մէկ մասն ալ, ժո-ղովրդեան ուրիշ մասերուն հետ մէկտեղ, ստիպուեց իր քաղաքէն դուրս ելլել և դաշ-տին մէջ առժամայ բնակութիւն հաստա-տել վրաններու տակ, զորս հայկալիքն են անդալիս իշխանութիւնը: Նահանգիս վեհա-կուսակալը, անձամբ այցելեց ի արիւծանա-ններուն, և կառավարական պաշտօնէից մի-ջոցաւ օգնութիւն փութացուցեր է անոնց: Կայսերական հրամանաւ՝ ամէն հոգածու-թիւն կընծայուի արկածախններուն:

Անգլալի կերպով, աւ տակաւ, խոստովա-նելու կ'իջէր իր կատաղութիւնը, ու սրտին ամենէն զաղտնի զգացումները կը մերկանար: Առաջին անգամ ըլլալով խօսեցաւ Ժեր-մէնի վրայ, երեան հոնեց գաճաճիս այն խորին ատելութիւնը զոր ուխտած էր աղջ-կանը գէմ:

Խօսելու առիւթը վեհաշուք շարժուածքներ ունէր, և զիմաքներու այնչափ հփու ա-րտայայտութիւններ, իր անձին վրայ այն-չափ ճշդիւ կը ներկայացնէր նկարագրած զգացումները, որ միմեզ, որ սակայն կի-ններու այդ գաղափարներուն վարժուած էր, կը զգար որ քաջութիւնը իրմէ կերթար, ծրագրերը յօդ կը ցնդէին, և թէ ինքը անոր իշխանութեան ներքեւ եղալ իր մըն էր՝ անոր ձեռքին տակ անազապի և հըռ: Կանգնած էր ան հիմայ, մեծաշուք, ու

Կարնայ առաջնորդ Տ. Զաւեն Ծ. վար-դապետ կիրակի իրկուսն հետագրած էր Ս. Պատրիարքին. — «Երկրաշարժը կը տեւե-րեք օրէ ի վեր: Թորոքաւոր ձիւն կը տե-ղայ՝ փնտաւած են Մայր Եկեղեցին, Աղբ. վարժարանը և Սանատարեան վարժարանը: Զանազան շէնքերու եղած փնտներուն կա-րեւորութիւնն ու մանրամասնութիւնները այժմէն չեն կրնար ճշդուիլ ու հաղորդուիլ: Բոլոր ժողովուրդը վրաններու տակ է: Սաս-տիկ պէտք կայ օգնութեան»:

Ս. Պատրիարք Հայրը, այս հետազոտը ստանալուն պէս, փութաց հետագրով 400 ոսկի զրկել Կարնայ առաջնորդին: Միեւնոյս ժամանակ Ն. Ամենապատուութիւնը մաս-նաւոր մը կաղմեց մայրաքաղաքս գտնուող կարնեցի պատուաւոր ազգայիններէն և Կոն-ստանթնուլէն՝ որպէս զի նպատակ հաւաքեն երկրաշարժէ արկածախններուն: Մասնաւորա-րի անգաղափարն էր՝ Տիարն է՛ք. Տէր-Ներ-սէսեան, Դանիէլ է՛ք. Հանսեան, Դարե-գին է՛ք. Աղաւեսն և Կարապետ է՛ք. Խեթ-պէկեան:

Պատրիարքական հրաւերը և մասնաւորա-րի գլխավոր աշխատակա-րութիւնը ունեցան քանի մը օրուան մէջ, և մինչև երկիւր բարեօքը ազգայիններու կողմէ եղած նուիրատուութեանց գումարը կը հաս-նէր 500 ոսկիի, որ յաջորդաբար Կարնայ առաջնորդին ղրկուեցաւ Պատրիարքարանի միջոցաւ:

Տարակոյս չունինք որ նպատակները պիտի շարունակուին, արկածախններուն վիճակը կրկնապէս խղճալի ըլլալով՝ Կարնայ մէջ ու շրջակայքը սիրող սաստիկ ձմրան ու առա-տօքէն տեղացող ձիւնին պատճառաւ սրտնք դժուար կը դարձնեն վրաններու տակ կամ բացօթեայ բնակութիւնը:

Վերջին լուրերու նախելով, երկրաշարժին փրատակներուն տակէն 23ի չափ դիակներ հանուեցին են: (ՄԱՍԻՍ)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԾԽԱՐՋԵՆ

ԻԽԿԻԻՏԱՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉԸ. — Նոյ. 16 թուականով Կ. Պոլսէն «Թայմս»-ի կը գրեն թէ, Քիւպիմ փաշա՝ Խալիֆաւի (Ալ-պաշիա) կառավարիչը, հրաժարական տու-ած է, տեսնելով որ չորս տարիէ ի վեր ըրած բոլոր ջանքերը չեն կրցած այդ եր-կիրը խաղաղեցնել, քանի որ Բ. Դուռը ազ-գու միջոցներ ձեռք չ'ունեց:

ԱՆԻՒԻՈՅ ՊԱՀԱՆՔԵՆԵՐԸ. — Սըր Նիքօրս Օ'Քոնօր խոսիլ կը պահանջէ Բ. Դուռէն որ Անգլիոյ պահանջներուն փո-

խ յոստահատութեան ստատիսթներ մէջ, ունեւալը կը չափեր անկանոն քաղաքացի մը, պահ ընդ պահ կ'անգ առնելով Սալա-ատին առջև, կարծախախտ պարբերութիւն-ներով իր ոխը անոր երեսին փչելով, թա-ւաղողը ժայթքելով այն հայհոյութիւնները և թշնամեցնելը զոր թուրքերէն լեզուն այնչափ հզօրապէս կ'արտայայտէ:

Ճիւղակ պաթիստէ երկայն շրջագոյնող լայն խորշարդանքներով մինչև ոտքերուն կոճերը կ'իջնէր, ու միայն քիչ մը բաց մնացող կուրքին վրայ ճեղքուած էր: — Եւ այս շատ պարզ, քօղի մը թեթեւութիւնը ունեցող նոյն զգեստը անոր մարմնոյն ըզ-մալիւրի ձեւ կ'անէր: — Ամեն մէկ հառա-չանքը նրբանոյր կերպաւոր վրայ կը սա-հնեցնէր դանդաղ վեպիտուս մը որ զայն տմբղովին կը բարձրացնէր:

Գ. Ե. Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎԵԻԹԻԹԷ — ԳԼԽԱԽՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԿԻՆ ՋԱԲԻԹԷԻ ԾԷՆԻՐԸ

խարէն վաղուց խոստացուած գոհացումները տրուին: Անպիտոյ գետնային բռնած ընթացքը մեծ ազդեցութիւն ըրած է թէ՛ Պալատին և թէ՛ Բ. Դոան վրայ:

ԲԱՐԵՆՈՐԳՈՒՄԵՆԻ ԻԹՈՒՐԻԲԻԱ.— «Տէյլի Բրոնիքը»-ը կ'ըսէ թէ՛ Պրանքո-թրքական միջադէպը վերջացած ըլլալով, շատ հաւանական է որ Թուրքիոյ ընդհանուր բարենորոգումներու խնդիրը մէջտեղ դրուի:

Այս ամառ, թէև մեծ պետութիւններու մէջ բանակցութիւններ կատարուեցան և ամենք ալ համաձայն մնացին Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ բարենորոգումներ մտացնելու պէտքերն վրայ, ուստի տարակարծիք կը գտնուին այդ բարենորոգումները ձեռք անցնելու եղանակին վրայ:

Յրանայի կողմէ Թուրքիոյ ելեմուսքը միջազգային ֆոնքորի մը տակ անհետ առաջարկը մերժուեցաւ Ռուսիոյ կողմէն եկած ընդդիմութեան հետեանօք, և անկից ի վեր որեւէ նոր առաջարկ մը մէջ տեղ չի դրուեցաւ, և բանակցութիւնները դադարեցին Պրանքո-թրքական միջադէպի պատճառով:

Պոլսոյ գետնայինն ալ այս խնդրով զբաղեցան և իրենց խորհրդակցութեանց նիւթ ըրին, սակայն իրենց բանակցութիւնները դադարեցաւ Պ. Բոնսթանի մեկնումով, և սակայն պիտի վերսկսուին, քերականական գետնային վերադարձէն անմիջապէս յետոյ:

Բնականաբար Սուլթանը պիտի ընդդիմանայ որեւէ բարենորոգման, և եթէ պետութիւնները դիտաւորութիւն չանեն իրենց յարաբերութիւնները գործնական ձևի մը վերածելու, աւելորդ է ուրեմն օր՝ բանակցութիւնները շարունակուին:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ն. Բ. Խտիւրը այս իրիկուն Միջնաբերդի մէկիւթը պիտի երթայ Շապահի կէտին արարողութիւններուն ներկայ գտնուելու համար ընկերակցութեամբ իր եղբոր՝ Բրիտ Մուհամմէտ Ալիի և բոլոր նախարարներուն:

—Երկի նախարարական ժողովին մէջ վաւերացուեցաւ կառավարութեան պիւտճէն 4902 տարւոյն համար:

Թաալիկայ տարուան պետութեան հասոյթները պիտի ըլլան 44,060,000 եփպտ. ոսկի և ծախսերը 40,850,000 եփպտ. ոսկի: Հետեաբար կառավարութեան արամադրութեան տակ պիտի մնայ 240,000 ոսկիի գումար մը:

Իրապալի մազերը անկապ մեխանակերպ գոնգուածով կ'իյնային շրջագոյնիս ռափաւորութեանը վրայ, ոտքերը, երկար վարձութեամբ, մերկ կը մնային: —Ամառուան հրատապ օրերուն, կը սիրէր այս վիճակին մէջ սահել գորշ գորգերուն վրայ և նոյն իսկ ուղարկուելու մարմարեփոխ վրայ, որոնց ցուրտ փայփայանքը կը վայելէր իր մարմինը: —Ամենափոքր ոտքեր ունէր, տղու և ծալ կնոջ ոտքեր, արեւելքի կիւնքուն կապոյտ երանկներով ձածկուած վարդերանգ գոյներով և արքայազն գիծերով արուն ոտքերէն, դոր կօշիկները և քալիւր ձեւ հանած չնէ:

Այս եղանակով մէջ, այդ աստու, Իրապալ կը թուէր ըլլալ յուսահատութեան կենդանի արձանը, իր եղբորական կսկիծին մէջ գրեթէ զարհուրելի:

—Տը Բրոմըր կամուսէն, այս ձմեռ շարք մը հացկերոյ՝մներ պիտի առայ և ընդունելութիւններ պիտի կատարէ:

—Գահիրէի Աւստր-Հունգարական փոխ-հրապետ Պ. Ժիւլ տը Սթրասքի Տօլիւմ, նոյն պաշտօնով Սելաթի փոխադրուած է:

—Կիրակի օր 500 դերձակ գործաւորներ ժամը 3ին «Հազար և մէկ գիշեր» գաւառի շրջանին մէջ ժողովուեցան, կանոնաւոր գործադուլ մը ընելու մասին խորհրդածութիւններ կատարելու համար, ժողովին կը նախագահէր Տօք. Բիթլիս:

Երկար վիճաբանութիւններէ ետքը որոշուեցաւ վարպետներէն շարքականի հաւելում մը պահանջել, և եթէ այս վերջինները մերժեն, ընդհանուր գործադուլ մը ընել:

Այս որոշումէն ետքը ժողովականները նուազածուաց խումբ մը առջինին, քաղաքին զլխաւոր փողոցներուն մէջ պտոյտ մը կատարեցին:

—Երկուշաբթի օրէն սկսեալ Պոլսէն Երկու շաբաթները այլևս քաղաքի մէջ չը պիտի ելնար:

—Խտիւրական Օրէրայի իտալական խումբը, շարք մը գիշեր իր ներկայացումներու շարքը սկսաւ ԱՅՏՈՒՄ: Խտիւրին ամբողջութիւնը խիստ լաւ ապաւորութեան մը թողուցած է ունկնդիրներուն վրայ:

Այս գիշեր ԹՕՄԲԱ:

—Թղթաւարական վարչութիւնը խնայողական քննութիւններ թիւր 26էն 76ի բարձրացնել որոշած է:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԼՈՒՏՈՆ, 22 Նոյ.— Մամուլը լրջօրէն կ'զբաղի Գերմանիոյ հականգլիական ցոյցերուն խնդրով: «Թայմ»-ը գերմաններուն դիմելու կուտայ որ իրենց ալ միեւնոյն իրաւունքը ունին իրենց արիւստիքը գիւտարները պաշտպանելու և զանգստելու այն ամեն անհիմն ամփառանութիւններու դէմ որոնք բարեկամ զգի մը կողմէ կը տարածուին անգլագար: (Ռ)

ԼՈՒՏՈՆ, 22 Նոյ.— Պ. Չամպլայթը վատառողջութիւնը պատրուակ բռնելով, չէ ուզած ներկայ գտնուիլ պարգեաւարձութեան հանդէսի մը որու հրաւերուած էր: Ըսած է թէ՛ իր ամբողջ ոյժերը կը վերապահէ իր հանրային գործունեութեան: (Ռ)

ԼԻՎԵՐՔՈՒԼ 22 Նոյ.— Լիւրքոյի պանքան կը ծանուցանէ թէ՛ իր արկղակաշնէն մին անյետացած է 170,000 օսկիի բաց մը ձգելով, սակայն զրամասան կա-

Սալաւատին կը նկատէր զայն, չափազանց գեղեցիկ գտնելով զայն, շատ գեր ի վերոյ այն նսեհէն զօր կուգար անօր առաջարկել:

Սալայն յանդգնութիւնը վերստին կուգար իրեն, քանի որ չէրքէզ կնոջ գրգռութիւնը կը նստազէր: —Տարապայման զգացումները, մեծ կատաղութիւնները, ինչպէս մեծ ուրախութիւնները, երբ իրենց զայրագնութեանը հասնին, չեն կրնար երկար առան անոր մէջ մնալ:

Միմուրը այդ մասին քաջ փորձառու էր և անտարակոյս պիտի ջանար օգուտ քաղել այն վայրկեանէն յորտմի Իրապալ պիտի յուրէնք այն սրտազգու աղմուկէն զօր կը հանէր բացակայ բրէնսին դէմ, յուսալով անշուշտ որ այդ բողոքները շուտով և ճշգրէտօրէն անոր իմաց պիտի տրուէին: Արգա-

ցութիւնը ատով վտանգի տակ չ'իյնար: (Ռ)
ԵՐՈՒՄԵՆԻՍՊՈՒՐԻ, 23 Նոյ.— Տեղական իշխանութիւնները պատճառութիւն մը երևան հանեցին քաղաքին մէջ: Գետն հսկիչներու կողմէն (Ռ)

ԼՈՒՏՈՆ, 23 Նոյ.— Ընդունուեցաւ Գանատայի առաջարկը որ է 500 հոգիէ բաղկացած կազմ և պատրաստ վաշտ մը միացնել անգլիական բանակին: (Ռ)

ԼՈՒՏՈՆ, 23 Նոյ.— Պ. Չէմպլայթը կը յայտարարէ թէ՛ ոեւէ հրաւեր մերժած չէ առողջութեանը պատճառով: Զաւառողջ վիճակ մը ունի: (Ռ)

ԼՈՒՏՈՆ, 23 Նոյ.— Թալաւորը գերմանական նոյ, գետնային կոմս Մէթլինի հետադրեց թէ՛ Անգլիան կոմս Հալֆէլտի մահուամբ հաւատարիմ բարեկամ մը կորստեցուց: Լորտ Սոլսբըրի հետադրեց վախճանեալին որդւոյն թէ Գերմանիա հազուադէպ ծառայ մը և Անգլիա անկեղծ բարեկամ մը կորսնցուցին: Վիլհէլմ կայսրը և կոմս Պիլլով քաւակական հետադրի զբոսկեցին զովաբանելով վախճանելուն ծառայութիւնները: (Ռ)

ԱՄՍԹԵՐԺԱՄ, 22 Նոյ.— Վիլհէլմին թագուհին լիժու մը սենցալ:

ԱՄՍԹԵՐԺԱՄ, 23 Նոյ.— Կստի թէ Վիլհէլմին թագուհին պատահած արկածը հետեանք է իր ամուսնին տուած ծեծերուն: (Հ)

Կ. ՊՈԼԻՍ, 24 Նոյ.— Տաճկաստան երբեք ելմական աւելի մեծ տագնապի մէջ չէր գտնուած: Շատ մը զաւառներու մէջ զօրքերը թողակ չեն ստանար: Խեղուութիւնները յաճախ կը կրկնուին: Երթալով կը շեշտուի այն կարծիքը թէ անհրաժեշտ պէտք է դիմել ելմական քննութեան մը գրութեան (Ռ)

ԲԱՐԻՉ, 24 Նոյ.— Պ. Լուպէ ներկայ գտնուեցաւ Սորպոնի մէջ Պ. Պերթլոյի գիտական յիշատակին: (Հ)

ԱԹԷՆԻ, 22 Նոյ.— Կրօնամեղութեան տարօրինակ պայթիւն մը տեղի ունեցաւ ուսանողներուն մէջ Աւետարանը արդի յունարէն թարգմանելու գաղափարին դէմ, գաղափար օր սրբապաշտութիւն մը կը համարուի: Ուսանողները թարգմանութեան կողմնակից եղող թերթերուն խմբագրատուններուն վրայ յարձակեցան և ապա Համալսարան քաջուեցան օւրիկ վէճը կը պարպէին զիրենք շրջապատող ուստիականներուն և զօրքերուն վրայ: Երկու կողմէն 7 մեռեալ և 30 վիրաւորեալ կայ: Խնդիրը հիմա քաղաքական սուր կերպարանք մը ստացած է:

ԱԹԷՆԻ, 22 Նոյ.— Մէտրապոլիտն օւստիականագետը հրաժարականն տուին:

Բն, թիւ մը վերջը գնաց ինկաւ զաճաճին ըովը, ու անոր ձեռքերէն բռնելով, արցունքներու վերջին ժայթքումով մը պոռաց անոր:

—Սալաւատին... բարեկամս, խօսէ, պատասխան տուր... Ըսէ... արդարացի է որ ինծի պէս կին մը այս ծայրայեղ ստաւապանքներուն և խեղճութիւններուն ենթարկուի...:

—Ոչ, սիրելիս, ոչ, արդարացի չէ, պատասխանեց զաճաճը իրեն ըովը առնելով զայն: Ե այս վայրկեանիս, ուր կիրքը կամքէն աւելի բարձրաձայն կ'աղաղակէր, անկեղծօրէն կը խօսէր ու զայն ծայր-աստիճան դժբախտ կը գտնէր: Բայց, սիրուհիս, աւելցուց տխրութեամբ, կը տեսնեմ, զքեզ այսպէս տեսնելով զգացած վիշտս կ'անձաբակի զիս, ալ չեմ գիտեր թէ քեզի ինչ ըսելու եկայ հոս, շրթունքներս ալ խօսք

Բազմութիւնը լուծեամբ ներկայ գտնուեցաւ զոհերուն թաղման հանդէսին: Նախարարները վստահութեան քուէ մը պիտի խնդրեն:

ԱԹԷՆԻ, 24 Նոյ.— Բաղադը խաղաղ վիճակի մէջ է, սակայն հեծեալ գիշերապահներ պիտի կը պատին փողեցներուն մէջ: Խորհրդարանը երկէ արժանաւոր նիստ մը ունեցաւ որ վերջացաւ կառավարութեան վրայ վստահութեան քուէով մը:

Բանակաւոր միջոցին յայտնուեցաւ թէ թագուհին է որ նախապէս Աւետարանի թարգմանութեան գաղափարը տուաւ, սրով հետեւ պատերազմին առնել տեսաւ որ զինուորները անկարող էին նախնեաց յունարէնը հասկանալու: Հակառակամարտ կուսակցութեան ատենախօսները հասկցուցին թէ պալատին մէջ գաղափար խորհրդակցութիւններ կը կատարուին թարգմանութիւնը դիւրացնելու համար և գաղափար յայտնեցին թէ Ռուսիան ծածկաբար խնդիրն մէջ մատուցին:

Նախարարագետը խորհելով որ կողմնակցութեան ոեւէ կասկած հեռացնելու համար հարկ էր ուրիշ զահլիճի մը յանձնել եղած խռովութիւններուն քննութեան հոգը, զահլիճը հրաժարականը տուաւ: (Ռ)

ԱԹԷՆԻ, 24 Նոյ.— Դահլիճը հրաժարականը տուաւ: Պ. Չափմիս յանձնուեցաւ նոր զահլիճը կազմելու պաշտօնը:

Ա Զ Դ

ՏԻԿԻՆ ՏԻՐՈՒՀԻ ԳԱԼԵՆՏԵՐ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ, արեւելեան և եւրոպական երաժշտութեան մասնագէտ, Պոլսէն այս անգամ Գահիրէ եկած ըլլալով, պատրաստ է դաշնակի դասեր տալ, նորագոյն մէթոտով, իրեն գիմող աշակերտաց: Փափաքողները պէտք է դիմեն Տիար Ս. Մաճարեանի գրասենեակը, Պապ-էլ-Հատիտ փողոց թիւ 31:

9—20

ՏԻԿԻՆ Է. Ա. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԴԵՐՁՊԿՈՒՀԻ

Քաղաքի մէջ ծանօթ այս գերձակունցին պատիւ ունի ծանուցանելու իր բազմաթիւ յաճախորդներուն ինչպէս նաև յարգող հասարակութեան թէ՛ այս անգամ իր Պապ-էլ-Հատիտ փողոց Տէպպանէի տնային մէջ, առաջին յարկ թիւ 3 արարթամանը:

5—10

չունին, միտքս ալ մտածում չունի, քու տուայտաճրովք կը տուայտիմ, կ'ուզի քու արցունքները լալ:

Խօսելով հանդերձ երթալով աւելի կը մօտենար, ուզելով ամբողջովին միմիկարել զայն համբոյրով մը: Բայց ան յետո ընկրկումի յանկարծական շարժում մը ըրաւ:

—Ա՛խ, Սալաւատին... կատակի ատեն չէ, ըսաւ լուրջ եղբի:

—Լուր՛՛, Իրապալ... մրմնջեց վերջապէս հեղձարկուն... Զ'հասկցա՛մ թէ ո՛րքափ կը օրէկի քեզ... Զե՛ս գիտեր որ, քեզի համար, տէրս կը մատնեմ, անոր տունէն կը ձգեմ կ'երթաս, ամեն քաղաքականներու կը հանգուրծեմ...:

Շարունակելի) Թարգմ. Յ. Մեծեան

Յ. ԲԵՄՊԷՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻՑԻԻ ԵՒՆԻԲԻՆ ԳԻՄ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒՆՈՐԻԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՑՈՒՄ 1893 թ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻԱՌ 961 ՀՍԱՐ ՁԵՐԿ

Ապահովագրական ամեն կարելի դրուիւնները կը զո ծաղիւն. խառնապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱԼ ԼԱՅՑԻ սակագիրն և ապահովագրութեան զանազան դրուիւնները չառումնասիրած մի ապահովագրութիւն. — Առատաձեւն պայմանները Տեղեկութեանց համար գիմելի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐՉԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԵ, Ընդհ. ներկայացուցիչը: Աղբիւրանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուար. Գ. ԵԼԱԻՈՅ ԴԵՐ-Գործակալ Ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՁԵՐԿ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ 8 ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'առանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխաւարութիւն արժէքաւոր թուղթերու վրայ: Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ:

Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կ'առայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը դանձէ եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ. ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուտհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿԻՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բիւրէա, Խիւրի, Միսիւրի և Կ. Պոլս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղբիւրանդրիա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:

ԵՄԱՆՈՒՄ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւները Բիւրէա:

Բէա հանդիպելուն, Արքեպիսկոպիտ:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿԻՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոս-Սայիտ, Եպֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէստըլուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղբիւրանդրիա ամեն շաբաթ օր, առաւօտեան ժամը 6ին: Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր

Մօզու հետեւեալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՑՈՒ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանքային համար դիմել ընկերութեան մէջ, Աղբիւրանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Գիւլքի ամեն ժամանակներուն: 1-1902

ՏՕՔ. Ս. ԹԱՀՄԻՉՈՅ

Փորձառու բժիշկ արդէն Պոլսոյ և փոքր-Ասիոյ կողմերը տարիներով իւր արհեստը ի գործ դրած և յետոյ Բարիզի հիւանդանոցներուն մէջ ներքին հիւանդութեան իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով, վերջերս ժամանակ մը Սօֆիայի կեդրոնական հիւանդանոցին մէջ ծառայելէ ետքը այլ անդամ եկած է հաստատուել ի Գահիրէ:

Առ ժամապէս կը գտնուի ի Ջէյթուն, և իր տունը՝ Կընդունի իրեն դիմող հիւանդները, առանձնեան ժամը 10—12, և կէս օրէն յետոյ՝ 3էն 5 Պ. Տիւրքի դեղաւանը յէլպէքիէ, Գահիրէ:

Երթեւեկի և շաբաթ օրերը աղբիւրանդրիա ձրի կը դարձանուին:

ԼԵԻՈՆ ԿԻԻՄԻԻՇԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՆՈՅՑԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԵՐՈՒ

Ի ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց,

Ե. և Ս. Սիսնաիի վաճառասան դէմը

Ապրանքային զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճօրն հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Ժանկրաֆներու

Մանր: Վարպետ ժամագործ մը յաճախորդներուն տրասագրութեան տակ կը գտնուի:

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՍԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԼՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի յէջ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻՋՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍԱՅԻ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգենաւերով

ԱՆՐԱՐԷՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թան. 5500	2ԻՍԼԱՅՈՅ տրղթ. թան. 5500
ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500	2ՍՐ " " 5500

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ կանոնաւոր մեկնում Աղբիւրանդրիայէն դէպ ի ԲՈՒՄԱՅԻՏ, ԵԱՅՈՒ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԵՐՍԻՆ, ԳԻՐԱՆ, ԻՋՄԻՐ, ՍԵԼԱՆԻԿ, ՏՈՒՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԳԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ Աղբիւրանդրիա, Թիքուսան փողոց:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորիւական հրամանագրով 25 Բունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000

Պահանջի դրամ " " 193,000

Կառավարիչ. Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ, Մասնաճիւղեր. Աղբիւրանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

ԴԺՈՒՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՍՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ հիւանդութիւնը շատ անգամ զժաւարամարութիւնէն արտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փոխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պէտք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն աղբիւրանդրիա:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աղբիւրանդրիա և զերու նման չի խանդարտ ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ դեղաւաններու մէջ:

Գ Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՆՈՅՑՆԵՐՈՒ. ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ ԵՒ ՖՕՆՈԿՐԱՖՆԵՐՈՒ